ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.1-րդ կետ.

«40.1) սահմանում է առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն):»:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.1-րդ կետ.

«41.1) որոշում է ընդունում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների ~~(կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, սաունա և շոգեբաղնիք)~~ տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ:»:

Հոդված 3. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետ.

«10) տալիս է համայնքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների ~~(կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, սաունա, բաղնիք և շոգեբաղնիք)~~ գործունեության թույլտվություն:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով լրացվող 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ և 41?1-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հաջորդող տասներորդ օրը: